«ՆՈՐ ՈՒԺ»

ՌԵՖՈՐՄԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Արժեքային հիմքերը եւ նպատակները

Ժամանակակից պետությունը կոչված է կազմակերպելու իր քաղաքացիների անվտանգությունը, իրավահավասարությունը, գիտական, տնտեսական, մշակութային, հոգեւոր զարգացումը, խաղաղ եւ արժանապատիվ գոյակցությունը հարեւանների հետ: Մենք հավատում ենք, որ Հայաստանի Հանրապետությունը բոլոր առումներով ապահով հանգրվան պետք է լինի ցանկացած հայի եւ բոլոր նրանց համար, ովքեր կընտրեն Հայաստանը որպես իրենց հայրենիք՝ ընդունելով մեր հանրության հիմնարար օրենքներն ու հայոց լեզուն՝ որպես համընդհանուր շփման միջոց:

Հայաստանը սոցիալական, ժողովրդավարական պետություն է, որը իր արժեհամակարգով անքակտելիորեն կապված է եվրոպական քաղաքակրթության հետ: Մեր հիմնական սկզբունքներն են՝ սոցիալական արդարությունը, հանրային հարաբերություններում խտրականության բացառումը, լայն մասնակցայնությունը, հասարակության բոլոր հատվածների ներգրավումը պետության զարգացման գործին: Ամբողջ հանրության պաշտպանվածության երաշխիքը յուրաքանչյուր քաղաքացու պաշտպանված լինելն է:

Իր քաղաքական նպատակները «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցությունը իրագործելու է բացառապես սահմանադրական եղանակներով՝ մերժելով որեւէ բռնի միջոց ներքաղաքական պայքարում:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Ժամանակակից պետություններում կուսակցությունները, դասական քաղաքական գաղափարախոսություններն իրար հակադրելու փոխարեն, հաճախ ընտրում են դրանք համադրելու ուղին: «Նոր ուժ» կուսակցության գաղափարական հենքը սոցիալ-ռեֆորմիզմն է: Դասական սոցիալ-դեմոկրատիայի տարատեսակը հանդիսացող այս գաղափարախոսության անունն իսկ պարունակում է սոցիալական արդարության եւ բարեկեցության ձգտումը շարունակական ռեֆորմների միջոցով: Սոցիալ-ռեֆորմիստական գաղափարախոսության մեր ընկալումը ենթադրում է, որ պետությունը, երկրի պաշտպանությունն ու անվտանգությունն ապահովելու, ազատ շուկայական հարաբերությունները զարգացնելու, մասնավոր սեփականությունն ու ձեռնարկատիրությունը խթանելու հետ մեկտեղ, ստանձնում է այնպիսի կարգավորող գործառույթ, որը կապահովի հավասար հնարավորություններ շուկայի զարգացման համար: Իսկ առանձին դեպքերում պետությունը դիմում է ավելի գործուն միջոցների՝ հնարավոր ճգնաժամերը կանխելու կամ առաջացած ճգնաժամերը հաղթահարելու նպատակով:

Ռեսուրսների ու կարողությունների գերկենտրոնացումը, հասարակության շերտավորումն ու բեւեռացումը աղճատում են ժողովրդավարության էությունը՝ հնարավորություն տալով խոշոր ռեսուրսներ տիրապետողներին՝ չափից շատ միջամտելու որոշումների կայացման գործընթացների վրա: Պետական ինստիտուտների շարունակական ռեֆորմների շնորհիվ անընդհատ կբարձրանա հանրային ծառայությունների որակը՝ պետական համակարգը դարձնելով ավելի ճկուն, պակաս խոցելի՝ քաղաքական եւ տնտեսական ճգնաժամերի հանդեպ եւ ավելի դիմակայուն՝ արտաքին մարտահրավերների ժամանակ: Պետությունը խրախուսում է քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացումը, այդ թվում, արհեստակցական միությունների կայացումը՝ որպես աշխատանքային իրավունքների պաշտպանության իրական գործիք:

Ներքին քաղաքականություն

Ներքին քաղաքականության առաջնահերթ խնդիրներն են.

Բազմակուսակցական համակարգի կայացումը, քաղաքական գործընթացներում առավելագույն թափանցիկության ապահովումը:

Քաղաքական ազդեցությունից իրապես ազատ, պրոֆեսիոնալ իրավապահ համակարգի ստեղծումը:

Զինված ուժերի իրական ռեֆորմների անցկացումը, ժամկետային զինծառայության պայմանների շարունակական բարելավման հետ մեկտեղ՝ պրոֆեսիոնալ բանակի ներդրումը:

Դատարանների անկախության ապահովումը:

Պայքարը կոռուպցիայի եւ հովանավորչության բոլոր դրսեւորումների, մասնավորապես, «էլիտար» կոռուպցիայի դեմ:

Պետական եւ համայնքային գնումների քաղաքականության թափանցիկության եւ հաշվետվողականության ապահովումը:

Ընտրական համակարգի կատարելագործումը, մասնավորապես, տեղական ինքնակառավարման մեջ մեծամասնական ընտրակարգի եւ տարածքային տարրերի ներդրման հարցի հանրային քննարկումը:

Տեղական ինքնակառավարման ապահովումն ու զարգացումը, վերջին տարիներին կենտրոնական իշխանության եւ կառավարող ուժի կողմից ՏԻՄ դեմ ագրեսիվ եւ հակաօրինական միջամտության բացառումը, ավագանու ինստիտուտի ուժեղացումը:

Գյուղատնտեսության ոլորտում մասնավոր ձեռնարկատիրության խրախուսումը՝ արտոնյալ վարկերի եւ սուբսիդիաների միջոցով: Պետությունը պետք է արդյունավետ գործիքներ կիրառի՝ իր տրամադրած արտոնությունների նպատակային կիրառմանը հետեւելու համար:

Որակյալ հանրակրթության, մատչելի նախադպրոցական կրթության ապահովումը, անվճար բարձրագույն կրթությանը միտված ռեֆորմների իրագործումը: Հասարակության կրթական մակարդակի համընդհանուր բարձրացումը պետության կայուն զարգացման անկյունաքարն է:

Համընդհանուր առողջապահական ապահովագրության համակարգի ստեղծումը:

Պայքարը ապատեղեկատվության դեմ, հանրության մեդիագրագիտության բարձրացմանն ուղղված համընդհանուր եւ պարտադիր կրթական ծրագրերի ներդրումը:

Քաղաքացիական հասարակության ինստիտուտների՝ արհմիությունների, հասարակական կազմակերպությունների ամրապնդումը:

Հայաստանի ժողովրդագրական աճին նպաստող իրական ռեֆորմների անցկացումը, այդ թվում՝ հայրենադարձության խթանումը, ինչպես նաեւ կառավարվող ներգաղթի խրախուսումը, ներգաղթյալների լեզվական, մշակութային ինտեգրումը:

Անկախ սահմանադրական մարմինների՝ Մարդու իրավունքների պաշտպանի, Սահմանադրական դատարանի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Հեռուստատեսության եւ ռադիոյի խորհրդի, Հաշվեքննիչ պալատի, Բարձրագույն դատական խորհրդի, Կենտրոնական բանկի ապաքաղաքական զարգացումը:

2020թ. 44-օրյա պատերազմի (ինչպես նաեւ 2021թ. մայիսի, 2022թ. սեպտեմբերի, 2023թ. սեպտեմբերի եւ այլ ռազմական էսկալացիաների) բոլոր հանգամանքների վերհանումը, քաղաքական կաշկանդվածությունից զերծ քննությունը, իրավական եւ քաղաքական գնահատականը:

Հայերենի՝ որպես պետական լեզու, համընդհանուր կիրառման ապահովումը:

Հոգեւոր կյանք

«Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցությունը հարգում է մտքի, խղճի եւ կրոնի սահմանադրական ազատությունը: Միեւնույն ժամանակ, պետք է հստակ կերպով կանոնակարգել (սահմանափակել) մարդու կամ մարդկանց խմբի ազատ կամքը խաթարող եւ/կամ առողջության համար հնարավոր վտանգ պարունակող կրոնական կազմակերպությունների գործունեությունը:

Մենք պաշտպանում ենք Սահմանադրությամբ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցուն վերապահված բացառիկ եւ անփոխարինելի դերը երկրի հոգևոր կյանքում և ազգային մշակույթի զարգացման գործում: ՀԱԵ-ն ուրույն գործառույթ ունի նաեւ սփյուռքի հետ կապերի զարգացման եւ հայրենադարձությունը խթանելու հարցում: Պետությունն ու եկեղեցին անջատ են ըստ օրենսդրության եւ փոխադարձաբար հարգում են իրենց վերապահված տեղն ու դերը հանրության կյանքում:

Արտաքին քաղաքականություն

Հայաստանը պետք է վարի հավասարակշռված արտաքին քաղաքականություն՝ ձգտելով հնարավորինս լայն կապեր ստեղծել տարածաշրջանում ու ամբողջ աշխարհում, բացառելով աշխարհաքաղաքական կենտրոնների բախման թատերաբեմում հայտնվելու հավանականությունը: Երկրի արտաքին քաղաքական նպատակները պետք է բխեն սեփական ռեսուրսների իրատեսական գնահատման վրա՝ ջանալով շարունակաբար լայնացնել այդ հնարավորությունների շրջանակը:

Վերջին տարիներին Հայաստանի իշխանությունների վարած անհեռատես, չհաշվարկված եւ վայրիվերո արտաքին քաղաքականության հետեւանքով ոչ միայն վերացավ Արցախի հայկական պետականությունը, այլեւ Հայաստանի Հանրապետությունը կանգնեց ահռելի անվտանգային մարտահրավերների առաջ՝ խարխլելով Հայաստանի արտաքին քաղաքական վարկը, կրճատելով հնարավորությունների շրջանակը եւ լուրջ հարված հասցնելով երկրի պաշտպանունակությանը: Հայաստանի հանդեպ թշնամական տրամադրված երկրները օգտվում են այս իրավիճակից՝ անընդհատ նորանոր զիջումներ կորզելով ու շարունակելով պահանջել ավելին: Այս խոցելի իրավիճակից երկիրը կարող է դուրս գալ միայն ճկուն, հավասարակշռված եւ բանիմաց արտաքին քաղաքականության շնորհիվ՝ որդեգրելով «չկան հավերժ բարեկամներ եւ թշնամիներ, կան հավերժ շահեր» սկզբունքը:

Արտաքին քաղաքականության մեջ իրենց կարեւորությամբ առանձնանում են հետեւյալ խնդիրները.

Հավասարակշված դիվանագիտության, գործընկերների հետ անկեղծ երկխոսության ծավալումը, բարեկամության եւ փոխշահավետ համագործակցության ձգտումը, այդ թվում՝

- Անմիջական հարեւան բարեկամ երկրների՝ Վրաստանի եւ Իրանի հետ ռազմավարական գործընկերության զարգացումը,
- Եվրամիության եւ եվրոպական երկրների հետ ինտեգրացիոն ծրագրերի լայնացումն ու խորացումը՝ հնարավոր բոլոր ուղղություններով ու մակարդակներով:
- Ռուսաստանի հետ բարեկամական հարաբերությունների պահպանումը,
- Քաղաքական, տնտեսական, մշակութային սերտ կապերի ամրապնդումը Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ,
- Հնդկաստանի, Չինաստանի, Մերձավոր Արեւելքի երկրների ավանդական բարեկամական հետ կապերի ամրապնդումը, ինչպես նաեւ՝ նոր կապերի ձեւավորումը հնարավոր բոլոր տարածաշրջանների ու երկրների հետ:
- Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ արժանապատիվ երկխոսության ձեւավորումը, հարաբերությունների կարգավորման եւ խաղաղ գոյակցության ձգտումը:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ կուսակցության դիրքորոշումը հիմնվում է Արցախի ժողովրդի՝ իր հայրենիքում ապրելու անառարկելի իրավունքի վրա: Ուժի եւ ուժի սպառալիքի կիրառմամբ եւ էթնիկ զտումների միջոցով հնարավոր չէ չեղարկել ՄԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված ազգերի ինքնորոշման սկզբունքը, որը դրված է եղել ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի հիմքում:

Սփյուռքի հետ հարաբերությունների անկյունաքարը աշխարհի բոլոր հայերին Հայաստանում մեկտեղելու գաղափարն է: ՀՀ-ն պայմաններ է ստեղծում հայրենիք վերադառնալու ցանկություն ունեցող հայերի համար, մյուսներին խրախուսում է հնարավորինս ամուր պահել կապը պատմական հայրենիքի հետ: Հայաստանը պետք է արձագանքի սփյուռքի համայնքներում հայատյացության ու իրավունքների սահմանափակումների այլ դրսեւորումներին եւ քայլեր ձեռնարկի՝ դրանք վերացնելու ուղղությամբ:

«Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցությունը կհամագործակցի գաղափարախոսությամբ եւ արժեքներով իրեն մոտ եվրոպական կուսակցությունների հետ՝ ջանալով դառնալ եվրոպական Սոցիալիստների եւ դեմոկրատների առաջադիմական ալիանսի անդամ: